

րե) պատճառաւ, և օդի նուազութիւնը առաջ կը բերէ հոն այսպիսի թորութեան որով դժոխային ջերմութիւնն և թթուածնի պակասը՝ կայրեն, հեղձամահ կ'ընեն. իսկ եթէ մօրից կազի (grisou) բորբոքում պատահի, ահաւոր պայթումներ, կործանումներ և եղբերդական մահեր՝ անխուսափելիութենէ տեղի կ'ունենան:

*
**

Այժմեան քաղաքակրթութիւնը կը պահանջէ հանքածուխի յարգը գիտնալ, կեանքի անհրաժեշտ տարր մը զայն ընդունելով՝ ամենակարեւոր հարաւարարուեալ բարձրութեան հասցնել անոր պեղումը:

Երկրաբաններ և հաշուազտներ՝ եթէ վախճանն որ բրածոյ ածուխի օր ըստ օրէ կրկնապատկուող սպառումը՝ պատճառ պի-

տի ըլլայ անոր լինելուն, կը վստահացընենք որ օր ըստ օրէ, մարդկային հանձարին հնարքները զարգանալով, ոչ միայն նորանոր հանաստաններ կը գտնէ, այլ նաև մաքն բարակ երակներն ալ շահագործելու միջոցներ առձեռն ունենալով, կը պեղէ միշտ երկրիս խորերը՝ շատ աւելի վար իջնելու հնարքներով. և ասով հազարաւոր տարիներու համար հանքածուխի բերքը ազահովցուցած ըլլալէ զատ՝ ելեկտրութեան անսպառելի աղբիւրը ի ձեռին ունենալով, մաքն ջրային առատ հոսանք ունեցող պետութիւններ ուշ թէ շուտ պիտի գիտնան հանքածուխի փոխանակել տալ անգոյն, անհոտ, անկշռելի, անտեսանելի ելեկտրականութիւնը: Հանքածուխի ներկայ ժամանակաշրջանին պիտի յաջորդէ էլեկտրութեան ժամանակաշրջանը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՄԻ.



Կ Ո Ձ Ն Ա Կ



Կոչնակ շարաթաթերթը՝ իւր փէ տարեթիւին առաջին պրակը, ստուգել պատկառելի հատորի մը ձեռք և Յ գեղեցիկ պատկերներով զարդարուած ի լոյս ընծայած է: Պէտք է խոստովանիլ որ Կոչնակի ընթերցումը՝ ամէն հասակի և զարգացեալ մտքի յարմար սնունդը կը բովանդակէ: Ամերիկահայ հմուտ, լայնախոհ անձնաւորութեան, և ընտրողութեան հաշակի տէր և մեծ հասկացողութիւն ունեցող խմբագրապետի մը շուրջ հաւաքուած, զրապան, գիտական, պատմական, ազգային և այլ առաջնակարգ յօդուածներու շարքեր անըզհետ ի լոյս ընծայելովն, վրած, անցած է հայկական շատ մը օրագրիները և պարբերական թերթերը: Ան պէտք է մուտք գտնէ ամէն արտասահմանի հայ տուններուն մէջ, և պիտի կատարէ հայ դաստիարակի, հայ հայրենասիրի, հայ առաջնորդի պաշտօնը, հայութեանէ ուժանալ սկսող արտասահմանեան նոր սերունդներուն:

Ան ոչ միայն ամէն շարաթ կանոնաւորապէս լոյս պիտի տեսնէ, այլ ամէն ամսուան առաջին թիւը՝ 60է աւելի էջեր պիտի բովանդակէ, ու

րուն վերջին էջերն՝ անգլիերէն լեզուով յօդուածներ պիտի բովանդակեն, որպէսզի օտար պահպանութեան մէջ ծնած՝ Հայերէն կարդալ չի գիտող հայ տղաք և հայ աղջիկներն ևս կարողալով զայն, բոլորքի իրենց մէջ ազգային ոգին և արծաթի հեռաւոր հայրենիքի սէրը:

Յունուար ամսուան առաջին երեք թիւերն առձեռն ունենալով, կը զմայլիք անոնց վրայ, վասնզի կը թուի թէ անոնք առաջնակարգ Մամուլի արտագրութիւններն են՝ իրենց բովանդակութեամբ: Կոչնակի հրատարակիչ ընկերութեան պատկառելի աշխատակիցներէն ոմանց անուններն հետեւեալք են. խմբագիր՝ Վեր. Հ. Յ. Խազոյեան. — Տեղաք. Վ. Մ. Քիւրքճեան. — Մ. Ս. Գաբրիէլեան. — Մ. Յ. Ամասիկեան. — Տր. Յ. Թիբեաթեան. — Տր. Հ. Ս. Հէլալեան. — Տր. Տ. Հ. Գապագճեան. — Կ. Յ. Փափազեան. — Մ. Վլազուր Տասօր՝ որուն գետնղած Հայ Հոգին յօդուածը՝ մէկ շնորք կը կարգացուի, և այլն, և այլն: Կը մաղթենք ամենայն յաջողութիւն և յարատեւութիւն:

Տարեկան գինն է \$1. 3: — Դիմել

The « Gotchnag » Armenian Weekly

115 E. 24th St.,

NEW YORK